ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ԵԴ2/6301/02/25

ՈՐՈՇՈՒՄ

Հայցադիմումը վարույթ ընդունելու և քաղաքացիական գործերը մեկ վարույթում միացնելու մասին

25 հունիս 2025թ. | ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «ԷՅ ՎԻ ԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունն ընդդեմ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի՝ «ԷՅ ՎԻ ԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 19.05.2025թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու և քաղաքացիական գործը թիվ ԵԴ2/5819/02/25 քաղաքացիական գործին միացնելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ԷՅ ՎԻ ԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2025թ. հունիսի 17-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի՝ «ԷՅ ՎԻ ԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 19.05.2025թ.

որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Էլեկտրոնային եղանակով վարվող գործը մակագրվել է դատավոր Գ. Վարդանյանին 2025թ. հունիսի 19-ին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 2025թ. հունիսի 20-ին:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Միաժամանակ՝ Դատարանի (դատավոր Գ. Վարդանյան) 2025թ. հունիսի 17-ի որոշմամբ թիվ ԵԴ2/5819/02/25 քաղաքացիական գործով հայցադիմումն ըստ հայցի «ԷՅ ՎԻ ԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունն ընդդեմ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի՝ թիվ «ԿԾՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-25/08» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունվել է վարույթ և գործով եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 2025թ. հուլիսի 29-ը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանը միևնույն գնման գործընթացին վերաբերող՝ սույն գլխով նախատեսված վեճերի վերաբերյալ իր վարույթում քննվող գործերը միացնում է մեկ վարույթում:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ թիվ ԵԴ2/6301/02/25 քաղաքացիական գործը և թիվ ԵԴ2/5819/02/25 քաղաքացիական գործը վերաբերում են միևնույն թիվ «ԿԾՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-25/08» ծածկագրով գնման գործընթացին, Դատարանը գալիս է այն եզրահանգման, որ թիվ ԵԴ2/6301/02/25 քաղաքացիական գործը պետք է միացնել թիվ ԵԴ2/5819/02/25 քաղաքացիական գործին և քննել համատեղ՝ ԵԴ2/5819/02/25 համարի ներքո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ԷՅ ՎԻ ԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունն ընդդեմ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի՝ «ԷՅ ՎԻ ԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 19.05.2025թ. որոշումն անվավեր ճանաչելու

պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ և քաղաքացիական գործը միացնել թիվ ԵԴ2/5819/02/25 քաղաքացիական գործին և քննել թիվ ԵԴ2/5819/02/25 համարի ներքո:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ **Գրիգորի Վարդանյան**

Digitally signed by VARDANYAN GRIGORI 1507850611
Date: 2025.06.25 12:39:34 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am